



Հաստատված է
«Արփա- Սևան» ԲԲԸ-ի

բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից

12.05.2015թ. 
Ժողովի նախագահ՝ Ատոմ Դավթյան

**«ԱՐՓԱ -ՍԵՎԱՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Ընդհանուր մաս

Սույն կանոնակարգը մշակված է "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքին համապատասխան, գործող օրենսդրության և «Արփա- Սևան» Բաց Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության հիման վրա:

Կանոնակարգը սահմանում է Վերստուգող հանձնաժողովի կարգավիճակը, կազմը, իրավասությունը և լիազորությունները, նրա աշխատանքի և ստուգումների իրականացմա կարգը, ինչպես նաև Ընկերության կառավարման այլ մարմինների հետ փոխհարաբերությունները:

2. Վերստուգող հանձնաժողովի իրավական կարգավիճակը

2.1. Վերստուգող հանձնաժողովը ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման համար:

2.2. Վերստուգող հանձնաժողովի իրավասությունն այն հարցերով, որոնք նախատեսված չեն օրենքով, սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ:

2.3. Վերստուգող հանձնաժողովի անդամի թեկնածուներն առաջադրվում են Ընկերության բաժնետերերի կողմից՝ ժողովի օրակարգում հարցերի ընդգրկման համար նախատեսված կարգով: Ընկերության Վերստուգող հանձնաժողովի անդամների թեկնածուները բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացվում են Ընկերության խորհրդի կողմից:

2.4. Վերստուգող հանձնաժողովն ընտրվում է բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ (որոնք իրավասու են մասնակցելու քվեարկությանը): Քվեարկությունները անցկացվում են առանձին ըստ յուրաքանչյուր թեկնածուի:

2.5. Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցերի քվեարկությանը չեն մասնակցում Ընկերության Տնօրենների խորհրդի անդամներին, ինչպես նաև գլխավոր տնօրենին և վարչության անդամներին պատկանող բաժնետոմսերը:

2.6. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության Վերստուգող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի (բոլոր անդամների) իրավասությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել:

2.7. Վերստուգող հանձնաժողովի անդամը, որը մտադրվում է վաղաժամկետ դադարեցնել իր գործառույթների կատարումը, պարտավոր է առնվազն մեկ ամիս առաջ դրա մասին տեղյակ պահել Վերստուգող հանձնաժողովին և Ընկերության խորհրդին: Այդ դեպքում առաջիկա բաժնետերերի ժողովը համալրում է Վերստուգող հանձնաժողովը:

2.8. Վերստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող միաժամանակ հանդիսանալ խորհրդի անդամներ կամ լինել տնօրեն, ինչպես նաև զբաղեցնել այլ պաշտոններ Ընկերության կառավարման մարմիններում:

2.9. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության Վերստուգող հանձնաժողովի անդամներին իրենց պարտականությունների իրականացման ժամանակաընթացքում կարող են տրվել պարգևավճարներ և/կամ կարող են փոխհատուցվել իրենց պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը: Այդպիսի պարգևավճարների և փոխհատուցումների չափերը սահմանվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

2.10. Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3. Վերստուգող հանձնաժողովի կազմը

3.1. Վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է երեք հոգի: Վերստուգող հանձնաժողովի անդամները ընտրվում են 3 տարի ժամկետով՝ բաժնետերերի ժողովի կողմից և այդ ժամկետի երակարացման իրավունքով:

3.2. Ընկերության Վերստուգող հանձնաժողովը առաջին նիստի ժամանակ բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է նախագահին և քարտուղարին:

3.3. Վերստուգող հանձնաժողովի նախագահն անցկացնում է նիստերը, կազմակերպում է Վերստուգող հանձնաժողովի ընթացիկ աշխատանքը, ներկայացնում Վերստուգող հանձնաժողովին Ընկերության խորհրդի նիստերում և բաժնետերերի ընդհանուր ժողովում:

3.4. Վերստուգող հանձնաժողովի քարտուղարը կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը:

4. Վերստուգող հանձնաժողովի իրավասությունը

4.1. Վերստուգող հանձնաժողովը տարին առնվազն մեկ անգամ ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը:

Ստուգումները կարող են իրականացվել նաև Ընդհանուր ժողովի, Ընկերության խորհրդի կամ Ընկերության քվեարկող բաժնետոմսերի ոչ պակաս 10%-ին տիրապետող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով, ինչպես նաև Վերստուգող հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ:

4.2. Իր գործառույթները կատարելիս Վերստուգող հանձնաժողովը.

- ստուգում է ֆինանսական փաստաթղթերը, գույքագրման եզրակացությունները, նշված փաստաթղթերը համեմատում է առաջնային հաշվապահական հաշվառման տվյալների հետ,

- ստուգում է Ընկերության պայմանագրերի, գործընկերների հետ հաշվարկների օրինականությունը,
- վերլուծում է հաշվապահական և վիճակագրական հաշվառման վարումը,
- վերլուծում է Ընկերության ֆինանսական վիճակը, ակտիվների իրացվելիությունը, սեփական և փոխառու միջոցների հարաբերակցությունը, բացահայտում է Ընկերության տնտեսական վիճակի բարելավման ռեզերվները և առաջարկություններ է մշակում կառավարման մարմինների համար,
- ստուգում է շահաբաժինների հաշվարկը և վճարումները, բյուջետային և այլ պարտավորությունների մարումը,
- ստուգում է Ընկերության հաշվեկշռի, հարկային մարմինների, պետական կառավարման մարմինների համար հաշվետու փաստաթղթերի կազմման ճշտությունը,
- ստուգում է Ընկերության խորհրդի և գլխավոր տնօրենի կողմից ընդունված որոշումների իրավականությունը, դրանց համապատասխանությունը կանոնադրությանը և բաժնետերերի ժողովի որոշումներին,
- համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների հետ համաձայնեցնելով՝ ստուգումների անցկացմանը (վերահսկմանը) մասնակից դարձնում Ընկերության աշխատակիցներին (տնտեսագետներ, ֆինանսիստներ, իրավաբաններ և այլ)։

5. Վերստուգող հանձնաժողովի իրավունքները և լիազորությունները

5.1. Վերստուգող հանձնաժողովն իրավունք ունի

- Ընկերության կառավարման մարմիններից, Ընկերության ստորաբաժանումներից և ծառայություններից, պաշտոնատար անձանցից ստանալ բոլոր պահանջվող փաստաթղթերը, աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը, որոնց ուսումնասիրությունը համապատասխանում է Վերստուգող հանձնաժողովի գործառնություններին և լիազորություններին։
- Պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 74-րդ հոդվածին համապատասխան։

- Ընկերության աշխատակիցներից գրավոր բացատրություն պահանջել, այն հարցերով, որոնք գտնվում են Վերստուգող հանձնաժողովի իրավասության տակ։

5.2. Վերստուգող հանձնաժողովի պահանջած փաստաթղթերը պետք է տրամադրվեն՝ դրանց գրավոր պահանջից հետո 2 աշխատանքային ընթացքում։

6. Վերստուգող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը և ստուգումների իրականացման կարգը

6.1. Իր աշխատանքը Վերստուգող հանձնաժողովը կազմակերպում է հանձնաժողովի անկախության, որոշումների ընդունման կոլեգիալության, անդամների մասնագիտական պատրաստվածության և պատասխանատվության սկզբունքների հիման վրա։

Սույն կանոնակարգի իմաստով Վերստուգող հանձնաժողովի անկախությունը դա՝ հանձնաժողովի անդամների անկախ լինելն է Ընկերության խորհրդի և գործադիր մարմնից անդամներից։

Որոշումների ընդունման կոլեգիալությունը ենթադրում է, որ որոշումները պետք է ընդունվեն Վերստուգող հանձնաժողովի նիստերի ընթացքում՝ քվեարկության միջոցով:

6.2. Իրականացման ժամկետներից ելնելով ստուգումները տարբերակվում են պլանային (հերթական) և արտահերթ ստուգումների:

Պլանային ստուգում պետք է իրականացվի տարին առնվազն մեկ անգամ (տարեկան ստուգում)՝ տարվա ավարտից հետո մինչև տվյալ տարվա հերթական տարեկան ժողովը: Տարեկան ստուգման ժամանակ իրականացնում է տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների համալիր (ամբողջական) ստուգում:

Արտահերթ ստուգումներն իրականացվում են ըստ անհրաժեշտության: Արտահերթ ստուգումների ընթացքում կարող են ստուգվել ինչպես ֆինանսատնտեսական առանձին գործառնություններ, այնպես էլ որոշակի ժամանակահատվածի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեությունը:

6.3. Վերստուգող հանձնաժողովը իրականացնում է երեք տիպի՝ ֆինանսական, գործառնական և իրավական ակտերին համապատասխանության ստուգումներ:

Ֆինանսական ստուգման ընթացքում ուսումնասիրվում են ֆինանսական հաշվետվությունը, հաշվապահական հաշվառման տվյալները և դրանց հետ կապված գործառնությունները՝ օրենսդրության պահանջների, գործող կանոնակարգերի և նորմատիվների, հաշվապահական հաշվառման ընդունված սկզբունքների պահպանման տեսանկյունից:

Գործառնական ստուգման ընթացքում իրականացվում է որոշակի ստորաբաժանման գործունեության վերլուծություն: Գործառնական ստուգումը ներառում է նաև Ընկերության հաշվառման համակարգի ուսումնասիրությունը, վերջինիս արդյունավետության և հուսալիության գնահատումը, նախահաշվով նախատեսված միջոցների տնօրինման արդյունավետությունը և համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Իրավական ակտերին համապատասխանության ստուգման նպատակն է Ընկերության ստորաբաժանման կողմից օրենքների, հաստատված կարգերի, կանոնների և նորմատիվների պահմանման բացահայտումը:

6.4. Ստուգման ընթացքում Վերստուգող հանձնաժողովը պարտավոր է կազմել աշխատանքային փաստաթղթեր, որոնք իր կողմից կատարվող աշխատանքների ծավալը և որակը հաստատող հիմնական փաստաթղթերն են: Դրանք պետք է պարունակեն ստուգվող ստորաբաժանման մասին անհրաժեշտ տեղեկատվություն և կատարվող աշխատանքների հակիրճ նկարագրություն: Մասնավորապես, անհրաժեշտ է նշել ստուգում անցկացնելու մեթոդը (համատարած կամ ընտրանքային), ստուգվող փաստաթղթերի ծավալը, սկզբնական և այլ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև գործող օրենսդրության անհամապատասխանության հայտնաբերված փաստերը, հանձնաժողովի կարծիքը հայտնաբերված թերությունների վերացման ուղիների վերաբերյալ և այլ խորհուրդներ՝ ստուգվող ստորաբաժանման գործունեության բարելավման մասին: Բացի այդ, աշխատանքային փաստաթղթերում պետք է արտացոլվեն ստորաբաժանման ներքին վերահսկողական համակարգի նկարագրությունը (այդ համակարգի դրական և բացասական կողմերի ընդգրկմամբ), ստուգման ծրագիրը և նախորդ ժամանակաշրջանի ստուգման աշխատանքների արդյունքները:

7. Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը

7.1. Աշխատանքային փաստաթղթերի գրառումների հիման վրա կազմվում է Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը, որը պետք է հստակորեն նկարագրի ստուգման աշխատանքների նպատակը, ուսումնասիրությունների խորությունը, իրականացված միջոցառումները, արված բոլոր եզրահանգումներն ու առաջարկությունները:

7.2. Ընկերության տարեկան ժողովին ներկայացվող եզրակացությունը ("Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենք, հոդված 93, կետ 1) պարտադիր պետք է ներառի՝

- Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.
- Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.
- Ընկերության ֆինանսական հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.
- Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին:

7.3. Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը պետք է ստորագրվի նրա բոլոր անդամների կողմից: Վերստուգող հանձնաժողովի այն անդամը, որը համաձայն չէ հանձնաժողովի եզրակացության հետ, իրավունք ունի ներկայացնելու իր գրավոր կարծիքը, որ պետք է կցվի հանձնաժողովի եզրակացությանը: Եթե ստուգող հանձնաժողովի անդամը չի ստորագրել եզրակացությունը և չի նախապատրաստել հատուկ կարծիքը, ապա եզրակացության մեջ պետք է նշվեն դրա պատճառները:

8. Վերստուգող հանձնաժողովի նիստերը

8.1. Վերստուգող հանձնաժողովը բոլոր հարցերը լուծում է իր նիստերում: Նիստերը անցկացվում են ստուգման սկզբում և դրանց արդյունքներով: Վերստուգող հանձնաժողովի անդամը կարող է պահանջել Վերստուգող հանձնաժողովի նիստի արտահերթ գումարում, եթե հայտնաբերվել են խախտումներ, որոնք պահանջում են անհետաձգելի քննարկումներ:

8.2. Վերստուգող հանձնաժողովի նիստը համարվում են իրավունակ, եթե նիստին ներկա են Վերստուգող հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստում կազմվում է արձանագրություն:

8.3. Վերստուգող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ակտերը և եզրակացությունները հաստատվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Դրանց հավասարության դեպքում վճռական է համարվում Վերստուգող հանձնաժողովի նախագահի ձայնը:

8.4. Վերստուգող հանձնաժողովի անդամը, որը համաձայն չէ մեծամասնության որոշմանը, կարող է արձանագրությանը կցել հատուկ կարծիք և այն ի գիտություն ներկայացնել Ընկերության տնօրենների խորհրդին և Բաժնետերերի ժողովին:

9. Վերստուգող հանձնաժողովի նիստի արձանագրությունները

9.1. Ստուգումների արդյունքները և բոլոր որոշումները, ինչպես նաև հանձնաժողովի նիստերի ընթացքը պետք է արտացոլվեն Վերստուգող հանձնաժողովի արձանագրություններում:

9.2. Վերստուգող հանձնաժողովի արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

9.3. Նիստի արձանագրության վարումը իրականացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից: Վերջինս անձնական պատասխանատվություն է կրում արձանագրության ճիշտ վարման և տեղեկությունների հավաստիության համար:

9.4. Վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները հաշվառվում և պահպանվում են Ընկերության փաստաթղթերի հաշվառման և պահպանման կարգի համաձայն:

9.5. Բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջի դեպքում նրան (նրանց) պետք է հնարավորություն ընձեռնվի ծանոթանալու հանձնաժողովի արձանագրություններին:

10. Վերստուգող հանձնաժողովի, նրա անդամների պարտականությունները և պատասխանատվությունը

10.1. Վերստուգող հանձնաժողովը պարտավոր է.

- տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ իրականացնել Ընկերության և նրա մասնագիտացված ստորաբաժանումների ֆինանսատնտեսական գործունեության ստուգում:

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացնել տարեկան, ինչպես նաև արտահերթ ստուգումների արդյունքները:

- ստուգման արդյունքում բացահայտված խախտումների և թերությունների մասին անիջապես տեղեկացնել Ընկերության խորհրդին, ինչպես նաև Վերստուգող հանձնաժողովի կողմից դրանց վերացմանն ուղղված առաջարկների կատարման նպատակով իրականացնել վերահսկողություն:

- պահպանել առևտրային գաղտնիքը, չհրապարակել ծառայողական տեղեկությունները, որոնց Վերստուգող հանձնաժողովի անդամները առնչվում են իրենց գործառնությունների կատարման ժամանակ,

- լիազորված մարմիններից պահանջել բաժնետերերի արտահերթ ժողովի գումարում՝ Ընկերության շահերի իրական սպառնալիքի ծագման դեպքում:

10.2. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովից առնվազն 30 օր առաջ Վերստուգող հանձնաժողովը Ընկերության խորհրդին տրամադրում է եզրակացություն՝ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների վերաբերյալ:

10.3. Վերստուգող հանձնաժողովի անդամները պարտավոր են իրենց պաշտոնական պարտականություններն իրականացնելիս գործել բարեխղճորեն և բավարար ուշադրությամբ, որը կգործադրվեր համարժեք պաշտոն զբաղեցնող անձի կողմից համարժեք հանգամանքներում սեփական գործը ղեկավարելիս, ինչպես նաև այնպիսի որոշումներ կայացնել, որոնք իրենց կարծիքով բխում են նախ և առաջ Ընկերության և նրա բաժնետերերի շահերից:

10.4. Վերստուգող հանձնաժողովի անդամները պատասխանատվություն են կրում ստուգումների ընթացքում թույլ տրված սխալների և իրենց հայտնի դարձած գաղտնի համարվող տեղեկությունների հրապարակման համար: Եթե հանձնաժողովի որևէ անդամի վերոհիշյալ գործողությունների հետևանքով Ընկերությունը վնասներ է կրել, ապա կարող է տվյալ անդամից վնասների փոխհատուցում պահանջել:

10.5. Ժողովի որոշմամբ Վերստուգող հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել, եթե վերջինս խախտել է կամ գործում է ի խախտումն սույն կանոնակարգով սահմանված պահանջների:

11. Վերստուգող հանձնաժողովի կանոնակարգում փոփոխությունների և լրացումների կատարելումը

11.1. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Ընդ որում՝ փոփոխությունները և լրացումները Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովին ներկայացվում են խորհրդի կողմից:

11.2. Եթե ՀՀ օրենսդրության փոփոխության արդյունքում սույն կանոնակարգի առանձին հոդվածները հակասության մեջ են մտնում վերջինիս հետ՝ այդ հոդվածները կորցնում են իրենց ուժը և մինչև Կանոնակարգում փոփոխություններ մտցնելու պահը Վերստուգող հանձնաժողովի անդամները ղեկավարվում են գործող իրավական ակտերով: